

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԱՌԱՔԵՆՈՑ ԵԿԵՂԵՑԻ

Աբեմանան դասն վրայ.

Ի Թուին Հայոց ՈՒՆ (=1176) նորոգեցաւ դուռն սուրբ  
Եկեղեցւոյս հրամանաւ իշխանաց իշխան Քրդին և ժեռամբ Յո-  
հաննիսի հիւսանն, որք ընթեռնուլք լիշեալք:

Հարաւային դասն վրայ.

ՋՀԱ. (=1522) Թուականի

Լ և Թիւ աւելի (=1557)

Յաթառակալութեան Տեսառն Սարգսի

Ի խանութեան Յաղուսլ բէկի

Մաղկեցաւ դուռն տանարի

Աւաքելոցն Քրիստոսի

Հրամանաւ սուրբ վարդապետի

Եռամեծիս Դանիէլի

Եւ սիրելի որդւոյ սորին

Եպիսկոպոս աէք Կերսէսի

Ձեռամբ սորին աշակերտի

Անարժանիս Արբանամի

Նաեւ կորաւք մեր սիրելի

Շնորհաւք ի լի Քրիզոբրիսի.

Յոսս անկանիմ ամենայնի

Հայցել Տեսառնէ պարզև ժրի

Բարունապետիս համայն ազգի,

Եւ ձնադացն իւրոց բարի

Կարապետ քահանայի  
Եւ մաւրն համօրի:

Եկեղեցու հարաւային աւանդատան վրայ՝ արտաքուստ.

Շնորհաւք և ողորմութեամբ ամենազօր էին Աստուծոյ մեք  
երեք հարազատ եղբարքս Սուլխան, Զալ և Զօրապ տփանք  
Նորոգել սուրբ եկեղեցիս լիշատակ մեզ և մեր ննչիցելոցն. հօրն  
Թաղային և մօրն Բէկի Սուլթանին, հանգուցեալ եղբօրն Պա-  
պին և ամենայն ազգայնոց: Այլ և խոստացաք շահ ստացուա-  
ծոց մերոց ընդ սմա տասանորդել. և միարանք սուրբ ուխտիս  
խոստացան լետ ութօրէիցն աւուր տօնի սուրբ Կարապետին  
պատարագ մատուցանել վասն մեր: Նորոգեցաւ ի թուականիս  
հայոց ՌՃԳ (=1654) ի հարապետութեան Տեառն Փիլիպ-  
պօսի, և լառաշնորհութեան Մխիթար վարդապետի:

Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՎՐԱՅ

Հարաւային պատի վրայ.

ԹՎ. ՌՃԿԳ (=1716) նորոգեցաւ սուրբ Կարապետ:

Գմբէթի վրայ.

Ի այնուհ Այ ես մէլիք Պապէս մէք (մէլիք) Մատուր  
ճանս Մաթիոս էրէցս հանէս Պապէս քեղուպաթս Ըստէ փնոսս  
Մաղկունուց ծորի մեծ ու փոք տանուարէքս էկինք ի դուռնս  
մբ Առաղիոց զիր տփինք Ենի աղին որ չպէլխուին խրճն վեր  
կարանք ինչ մէլիք կամ տանուար որ էլ խարն չզցի չպօխուին:

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՎՐԱՅ

Արևմտեան ճակատի, հարաւային սեան վրայ կայ հետեւալ  
արձանագրութիւնը, որ այժմ սուադի տակն է մնացել.

Յամի Ռ-երորդի ճԳԺ աներորդի (=1664)՝ շնորհօք Աս-  
տուծոյ մեք հարազատ եղբարք խօնայ Սուլխանս և Զալս ի քա-  
ղաքէն Տիխեաց ասքէն Զիթաղենց որդիք Թաղայի կկեալ ի

սուրբ անապատս ի Սեան ծովապատ զոր ի բազում ժամանակաց մեր կամաւ խոստացանք մեր ապրանաց շահն Ժ-անորդ տանք Սէվանայ, ամէն. զոր շինեցաք սուրբ Աստուածածնի եկեղեցիս և տուաք լիշատակ մի արծաթի կանթեղ, խաչ, բուրփառ, սկի, հողոյն հօր մերոյ Քաղային ձօր Բէկի Սուլթանին, եղբոր Պային, Զօրային և քվէրանց որդոց բաժինին. նաև միարանքս խոստացանք տարին Գ. ժամ մատուցանել: Կատարողք վարձս առցեն: Ի հայրապետութեան Տեառն Յակորայ:

Արևմտեան լուսամտի ներքև, զբսից.

Յամի ՌձԳԺ-աներորդի (=1664): Ծնորհօք Աստուծոյ մեք հարազատ եղբարքս Սուլխան, Զայս ի քաղաքէն Տփլիսեաց ասքէն Զթաղենց, որդիք Թաղայի, որդոյ Միրզիլոյ, եկեալ ի սուրբ անապատս Սէվան տեսեալ զսուրբ Աստուածածնի եկեղեցիս, զոր շինեալ լիշատակ. մեր ապրանաց շահի Ժ-անորդն տալ զտեղի բնակողաց և միարանքս խոստացած տարէն Գ. ժամ մատուցանել. սուրբ Զատին, Վարդապետին, Զորհնեաց առնից: Այս եղև ի հայրապետութեան Տեառն Յակորայ, առաջնորդ Մխիթար Եպիսկոպոս. Բարսեղ վարդապետ հանդուցելոյ:

Այս արձանագրութեան ներքև.

Ծնորհօք և ողորմութեամբ Աստուծոյ նորոգեցաւ եկեղեցիս իւր կնածոյն ի թուին ՌձԶԹ (=1740) ի հայրապետութեան Տեառն Դաղարի և առաջնորդ Մարտիրոս վարդապետի: Աստուած ողորմի ասացէք սուրբ և ողորմութիւն սուտղացն սուրբ տանս և աշխատողաց ևս Մարտիրոս վարդապետի որդի Աթապէկին, որ սուաւ Բ. թուման ողորմութիւն: Ողորմեսցի ձեզ Աստուած:

Նոյն եկեղեցու արևմտեան դռան աջ կողմում, զբսից:

Ծնորհօքն Աստուծոյ նորոգեցաւ տանիք սուրբ Աստուածածնի եկեղեցոյ ի հայրապետութեան տեառն Եփրեմի և նոսած Յովհաննու կաթուղիկոսի, յառաջնորդութեան տեղույս

Յովհաննէս վարդապետին և աշխատանօք բոլոր միաբանաց մանաւանդ Կարապետ վարդապետին, որ ի շինութեան մասին սպանաւ յալլազդեաց ի ժողովարարութեան, որ ելից վանս սղոյ, որք ընթեռնուք, ողորմի ստացէք: Յամի Տեառն 1832 և ի թուականութեանս ՌՄՁԱ:

Ս. Աստուածածնի այժմ քանդուած գաւթի փայտէ սեան վերայ եղել է հետեւեալ երկու արձանագրութիւնները.

Յամի Տեառն 1836. Նորոգեցան ի հիմանէ գաւթի սուրբ Աստուածածնի և մէկ մեծ մառան... չորս օդայ մէկ երկար քուլալիւ, արդեամբ և ծախիւք Լմեցի ձերունտդարդ ի Քրիստոս հանդուցեալ Ստեփանոս ճգնազգեաց վարդապետին, որ նախքան զվաղեան իւր կտակու աւանդեաց զծախան այսոցիկ միում միաբանից անապատիս Նիկողայոս վարդապետին, զիտութեամբ առաջնորդի տեղւոյս Յովհաննէս վարդապետին և բոլոր միաբանիցս, որ և աւանդեցաւ օգնականութեամբն Աստուծոյ և ձեռնաւութեամբ բոլոր միաբանիցս:

Այս արձանագրութեան ներքև. Կայսրն Ռուսաց Նիկոլայ Պաւլօֆիւն եկն յաշխարհս մեր ի հալաստան, յամի Տեառն 1837 և եմուս ի սուրբ Էջմիածին ի հովանեմբերի 4 և 5 սոյն ամսոյս լԵՐԷԱՆ. և ի 6 ի մուտս արեգական յաւուր չորեքշաբաթի էանց հանդէպ նուարանդատի անապատիս օթեկանս արարեալ ի դիւղն Չիրուխյու. մէկ գիշեր, և աստի ի Տփխիս քաղաք. և անտի ևս էանց զնաց խտրազութեամբ յաթոռն իւր ի Ս. Պ. Պրուրգ:

#### ՍԵՆԵԱԿՆԵՐԻ ՎՐԱՅ

Ս. Աստուածածնի եկեղեցու հանդէպ շինուած հին սենեակների վրայ եղած արձանագրութեան քարը այժմ պահուած է վանքում, որովհետև այդ սենեակները քանդուած և նորերն են շինուած: Այս քարի վրայ արձանագրուած է.

Շնորհիւն Աստուծոյ շինեցան սենեակքս արդեամբք Տրփխիսայ հայոց ժողովրդոց՝ ձեռնաւութեամբ Տեառն Յովհաննու կաթուղիկոսին, յառաջնորդութեան ընկի միաբանի տեղ-

ւոյս Յոսիաննէս վարդապետին Ղազարեցւոյ, աշխատութեամբ  
միարանից տեղւոյս. ՌՄՁԴ (=1835):

Երկու կից սենեակներէց մինի վրայ.

Յիշատակ է սոյ գոյգ սենեակը հիւրանոց բարեպաշտ Ար-  
ծրունեան ադա Բարսեղ Նոր-Պատղիզ ըստաքացւոյ. 1860  
ամի. ապրիլի 10:

Դպրոցական շէնքի վրայ.

Շնորհօքն Աստուծոյ կառուցաւ դպրոցս ի հայրապետու-  
թեան Տա. Տա. սր. կաթողիկոսի ամ. Հայոց, սրգեւամբ բարե-  
պաշտօն Աւետիս Բաղպեան Ղուկասեանց Շուշեցւոյ. 1897.—  
ՌՅԽԶ:

#### ՏԱՊԱՆԱԳՐԵՐ

Կղզու արեւտեան ծայրում կանգնած մի խաչքարի վրայ.

՝Ը ՈՅԶ ԹՎ. (1227) կանգնեցաւ խաչս բարեխաւսութիւն  
Արլ Հասանայ. Քրիստոս ողորմեա:

Ս. Աստուածածին եկեղեցու դռան մօտ կանգնած խաչքարի  
վրայ, որի մէջտեղում բանդակուած է խաչկրութեան և շուրջը՝  
Փրկչի անօրինութեան պատկերները.

Սուրբ խաչս բարեխաւս հայրապետի և Բեպեկայի. լիշե-  
ցէն զՔրիստոս. ԹՎ. ՌձԲ (=1653). Տրդատ կաղմոզ:

Բլբի գագաթին մի գերեզմանքարի վրայ.

Ենկինեցի Մարտիրոս. ԹՎ. ՌձԽԲ (=1693):

Ս. Աստուածածնի եկեղեցու մօտ մի գեղեցիկ գերեզմանա-  
քարի վրայ.

Թայիրեանց Ղուլի,  
Հին տոհմ մեծ աղգի,  
Ի Շամքոր ծնեալ  
Ի Վիրս պանդխտեալ: